

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 12/2

12 մարտի 2013թ.

Քննարկվեց <Բիբլոս Բանկ Արմենիա> ՓԲԸ 01.03.2013թ. թիվ 200 բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 19.02.2013թ. թիվ 216930 որոշման դեմ:

<Բիբլոս Բանկ Արմենիա> ՓԲԸ բողոքում մասնավորապես նշված է.

1. 21.01.2013թ. <Բիբլոս Բանկ Արմենիա> ՓԲԸ (այսուհետ՝ նաև Բանկ) էլեկտրոնային եղանակով հարկային տեսչություն է ներկայացրել կազմակերպության կողմից ոչ ռեզիդենտին վճարված եկամուտների, պահված շահութահարկի 2012թ. ամփոփ հաշվարկը, որի ստացման մասին Բանկը ստացել է համապատասխան ծանուցում:

2. 15.02.2013թ. (ուրբաթ օր) Բանկը ստացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության (այսուհետ՝ ԽՀՎ ՀՏ) պետի 12.02.2013թ. հիշեցում-ծանուցումը, որով հայտնվել է, որ Բանկը ընթացիկ տարվա հունվար ամսին չի կատարել վճարումներ և առ 01.02.2013թ. դրությամբ ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով գոյացել է 923.3 հազար դրամի չմարված պարտավորություններ: Նշված հիշեցում-ծանուցմամբ առաջարկվել է սեղմ ժակետում մարել առկա պարտավորությունը, այլապես կկիրառվեն պարտավորությունների հարկադիր գանձման օրենքով նախատեսված միջոցներ:

3. Բանկի կողմից ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օր անց (2013թ. փետրվարի 15-ը ուրբաթ է եղել, 16-ը և 17-ը՝ որպես շաբաթ և կիրակի, 18-ը՝ ՀՀ նախագահի ընտրություններ, եղել են ոչ աշխատանքային օրեր)՝ փետրվարի 19-ին ԽՀՎ ՀՏ պետը քննելով 19.02.2013թ. թիվ 141 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ Բանկի տնօրեն Արարատ Ղուկասյանը սահմանված ժամկետում չի վճարել ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարը: Գտնելով, որ արարքը համապատասխանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 170.3 հոդվածի հատկանիշներին, որոշել է նշանակել տուգանք՝ 20 000 դրամի չափով:

4. Ստանալով հիշեցում-ծանուցումը Բանկը ստուգել է ուղարկված հաշվետվությունը և պարզել, որ դրանում սխալ են արտացոլվել ոչ ռեզիդենտի գծով շահութահարկի տվյալները: Բանկն անհապաղ 20.02.2013թ. էլեկտրոնային եղանակով ուղարկել է ճշգրտված հաշվետվությունը, որի արդյունքում Բանկը չկատարված հարկային պարտավորություն չի ունեցել:

5. Ինչպես 2013թ. հունվար, այնպես էլ փետրվար ամիսների դրությամբ Բանկը փաստացի չունի չկատարված հարկային պարտավորություն:

6. Վարչական գործի քննության ժամանակի և վայրի մասին Բանկը ծանուցում չի ստացել:

Իրավական հիմնավորումներ.

<Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթարկվող անձն իրավունք ունի ծանոթանալու գործի նյութերին, բացատրություններ տալու, ապացույցներ ներկայացնելու, միջնորդություններ հարուցելու, գործի քննության ընթացքում օգտվելու փաստաբանի իրավաբանական օգնությունից, ... : Նույն օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ վարչական իրավախախտման գործը քննության նախապատրաստելու ընթացքում պետական մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է նաև այն հարցը, թե գործի քննությանը մասնակցող անձինք ծանուցվել են արդյոք դրա քննության ժամանակի և տեղի մասին:

<Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքով նախատեսված չէ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի քննության մասին վարույթի

մասնակիցներին ծանուցելու կարգը, հետևաբար նշված իրավահարաբերության նկատմամբ կիրառելի է <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասը:

Վերը նշված հոդվածի համաձայն՝ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է՝ վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է: Տվյալ դեպքում վարչական մարմինը (տեսչությունը) ունի պատշաճ ծանուցման ձևի ընտրության հայեցողություն, որպիսի պարագայում պետք է ղեկավարվել նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով:

Այսպիսով, վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի քննության մասին վարույթի մասնակիցներին ծանուցելը պետք է նպատակ հետապնդի ապահովել պատասխանատվության ենթարկվող անձին լսելու հնարավորությունը, ինչը հնարավորություն կտա վերջինիս լիարժեք իրականացնել իր իրավունքների պաշտպանությունը: Հետևաբար, ընտրվող պատշաճ ծանուցման ձևը պետք է լինի այնպիսին, որ անձին հնարավորություն ընձեռի ապահովել վերոհիշյալ պահանջները:

Այդ կապակցությամբ պետք է փաստել, որ ԽՀՎ ՀՏ պետի 12.02.2013թ. հիշեցում-ծանուցումը, որը Բանկը ստացել է 15.02.2013թ., չի կարող համարվել վարչական գործի քննության մասին պատշաճ ծանուցում, հետևաբար չի ապահովվել Բանկի՝ վերը նշված իր իրավունքներից օգտվելու հնարավորությունը:

Բանկը ճշգրտված ամփոփ հաշվետվությունը ներկայացրել է մինչև <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 66-րդ հոդվածով սահմանված վերջնաժամկետը՝ 20.02.2013թ. և եթե հարկային տեսչությունը գոնե ապահովեր իր հիշեցում-գրության մեջ նշված սեղմ ժամկետը Բանկին, այն է՝ մեկ աշխատանքային օրվա փոխարեն տրվեր երկու աշխատանքային օր, ապա կտեսներ, որ հարկային պարտավորություններ առկա չեն և կկայացներ այլ որոշում: Այս առումով կարծում ենք նաև, որ չի ապահովվել նաև <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի պահանջը: Այսինքն, կարծում ենք, որ վարչական ակտի օբյեկտիվ քննարկում կարող էր տեղի ունենալ միայն հիշեցում-ծանուցումը ուղարկելուց հետո մինչև փետրվարի 20-ը ներառյալ Բանկին ժամկետ տրամադրելու պայմաններում:

Այսպիսով առկա են վարչական ակտն ավավեր ճանաչելու ու այն վերացնելու երկու իրավական հիմքեր.

- այն կայացվել է <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 267-րդ և 275-րդ հոդվածների սխալ կիրառմամբ,

- 20.02.2013թ.՝ այսինքն հաշվետվություն ներկայացնելու վերջնաժամկետի դրությամբ ներկայացված ճշգրտված ամփոփ հաշվետվության պայմաններում Բանկը չունի չկատարված հարկային պարտավորություններ, ուստի անհասկանալի են վարչական տույժ նշանակելու հիմքերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում են անվավեր ճանաչել և վերացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ պետի 19.02.2013թ. թիվ 216930 որոշումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, լսելով Բանկի և ԽՀՎ ՀՏ ներկայացուցիչների բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

<Հարկերի մասին> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. <Հարկային մարմնի պաշտոնատար անձանց այն գործողությունների գանգատարկումը, որոնք կապված են վարչական տուգանքի նշանակման հետ, կատարվում է վարչական իրավախախտումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան>:

<Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն. <Վարչական պատասխանատվության ենթարկվող անձն իրավունք ունի

ծանոթանալու գործի նյութերին, բացատրություններ տալու, ապացույցներ ներկայացնելու, միջնորդություններ հարուցելու, գործի քննության ընթացքում օգտվելու փաստաբանի իրավաբանական օգնությունից ... : Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին»:

<Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 275-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է հետևյալ հարցը՝ գործի քննությանը մասնակցող անձինք ծանուցվել են արդյոք, դրա քննության ժամանակի և տեղի մասին:

Բողոքի քննարկման ընթացքում պարզվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 19.02.2013թ. թիվ 216930 որոշումը կայացվել է <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 267-րդ և 275-րդ հոդվածների պահանջների խախտմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը Հանձնաժողովը եզրակացնում է, որ բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 19.02.2013թ. թիվ 216930 որոշումը և գործը կարճել:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ